

րեկով, Թիֆլիսի ամենաբազմամարդ մի տեղում, զբօսնող ահա-
գին բազմութեան աչքերի առաջ:

Այդ եղևոնագործութեան մէջ ամենից ցաւալին այն է, որ
դասակարգային կեղծ պատուից զրդուած՝ մի սպառազինուած
մարդ յարձակուում է մի անզէն հոգեկան հիւանդի վրայ և տեղն
ու տեղն ատրճանակի չորս հարուածով սպանում նրան: Լինէր
այդ դէպքը մենամարտութեան ժամանակ, երբ դարձեալ զէն-
քի վարժ և անվարժ հակառակորդները հաւասար պայմանե-
րում չեն գտնուում, դեռ էլի մի կերպ ներկի կարելի էր համարել
յանցանքը, սակայն այն ձևով որ նա տեղի ունեցաւ—սոս-
կալի մի անարդարութիւն, գազանութիւն է: Ընթերցողը ի
հարկէ՝ հասկացաւ, որ մենք ակնարկում ենք Ձովրտլի սպանու-
թեան մասին: մի անզէն, հիւանդ պատանի անզգուշութեամբ
բռնութեւ է խուռն բազմութեան մէջ մի զինուած պարտի. այդ
վերջինն իր պատիւը չօշափուած տեսնելով ապտակում է անզգուշ
բռնողին, որը բնազդմամբ անդրադարձնում է հարուածը: Եւ
ահա զինուած Գանգելը իր պատիւը վերականգնելու համար այլ
միջոց չի գտնում, քան սոսկ սպանութիւն գործելու: Գուրս է
զալիս այդ գազանի չլոգիկայով, որ նա իրաւունք ունէր ապ-
տակելու՝ իրան անզգուշութեամբ, անգիտութեամբ բռնողին, և
այս վերջինը՝ հասարակութեան աչքի առաջ ապտակներ և հալ-
հոյանքներ կրելով՝ պէտք է ներողութիւն խնդրէր, գլուխ տար
և սուս ու փուս հեռանար...

Լ. Ս.

Մայիսի 25.

Հայոց կոնսիստորիայի 400,000 ըուբլու պահանջը ժողովըր-
դական լուսաւորութեան սինիստրութիւնից.—Այս տա-
րուայ մայիսի 2-ին Թիֆլիսի դատաստանական պալատը
երկրորդ քաղաքացիական բաժնում հետեւեալ կազմով—ղե-
պարտամենտի նախագահ Ն. Պ. Սմիտտեն, պալատի ան-
դամներ՝ Գոլուբև և Բեազանով պրոկուրորի օգնական Ա.
Աղիգեօղայովի մասնակցութեամբ՝ լսեց այն յայտնի գործը,
որով Վրաստանի և Իմերեթի հայ լուսաւորչական կոնսիստո-
րիայի հաւատարմատար Ս. Ս. Մեկիք-Աղամեան պահանջ էր
յայտնում ժողովրդական լուսաւորութեան միջխտրութեանը,
յանձին կովկասեան ուսումնարանական շրջանի հողաբարձուին,
անշարժ կաքերի սեփականութեան իրաւունքի մասին:

Գործի հանգամանքները հետեւեալներն են.—Պահանջի խնդր-

բազրով, որ 1899 թւի ապրիլի 2-ին տրուած էր Թիֆլիսի նահանգական զատարանին, երգուեալ հաւատարմատար Մելիք-Աղամեան բացատրել էր, որ 1898 թւի մարտի 26-ի Բարձրագոյն հրամանով յանձնարարուած էր տեղիս Կովկասեան ուսումնարանական իշխանութեան՝ բոլոր անհրաժեշտ կարգադրութիւններն անել իր տեսչութեան տակ առնելու այն կայքերը, որ պատկանում են հայ-լուսաւորչական եկեղեցական և վանական ուսումնարաններին, որոնք (ուսումնարանները) յանձնուած են իրան՝ համաձայն 1897 թ. յունիսի 21-ին Բարձրագոյն հաստատուած՝ Պետական-Սորհրդի կարծիքին: Բարձրագոյն այն հրամանը իրագործելու ժամանակ նկատուեց, որ ուսումնարանական վարչութեան պաշտօնեաները չը բաւականանալով ընդունելով այն կայքերը, որոնք պատկանում էին հայ-լուսաւորչական եկեղեցական և վանական ուսումնարաններին, դիմում էին տեղական հայ-լուսաւորչական հոգևոր կառավարութիւններին, պահանջելով յանձնել և այն կայքերը, որոնք իբրև անպայման սեփականութիւն պատկանում են հայ-լուսաւորչական եկեղեցիներին, իրանց պահանջները պատճառաբանելով նրանով, որ այժմ կարգադրութիւն է եղել ուսումնարանական վարչութեան կողմից՝ Կովկասեան ուսումնարանական շրջանի տեսչութեան տակ դրաւել նաև եկեղեցական կայքերը: Այսպիսի պահանջով առաջին անգամ դիմեց Ախալցխայի հայ լուսաւորչական հոգևոր կառավարութեանը՝ Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների տեսուչ պ. Բոգդանով 1898 թ. օգոստոսին № 823 հաղորդագրութեամբ, որից յետոյ նա առանձին ընդունման ակտով, որ կատարուեց տեղական գաւառական իշխանութեան ներկայացուցչի և վկաների ներկայութեամբ, բայց առանց հայոց եկեղեցու ներկայացուցչի մասնակցութեան, Կովկասեան ուսումնարանական շրջանի տեսչութեան և կարգադրութեան տակ առաւ բազմաթիւ գիւղեր և հոգևոր, 19,000 զեսեաւորն տարածութեամբ, որոնք անպայման սեփականութեան իրաւունքով պատկանում են Ախալցխայի հայ-լուսաւորչական Սուրբ—Փրկիչ եկեղեցուն և գտնուում են Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գաւառում, որոնք են—Կարծախ՝ 26,365 ախչայ, Սաւէտա՝ 13,000 ախչայ, Տատէշ՝ 16,000 ախչայ, Սողարին՝ 15,000 ախչայ, Կարաւ՝ 1,000 ախչայ, Սուլղա՝ 8,000 ախչայ, Պոզալ՝ 3,000 ախչայ և Ալախա՝ 3,000 ախչայ:

Այս պատճառով և ի նկատի առնելով, որ Մինիստրների Կոմիտեի 1898 թ. մարտի 26-ին Բարձրագոյն հաստատուած որոշման ճիշտ հիման վրայ ուսումնարանական վարչութեան յանձնուած է իր տեսչութեան տակ առնել միմիայն այն կայքերը,

որոնք սեփականութեան իրաւունքով պատկանում են հայ-լուսաւորչական եկեղեցական-ծխական ուսումնարաններին, իբրեւ իրաւաբանական անձերի, բայց ոչ թէ եկեղեցապատկան կայքերը, որոնց մասին յիշուած անգամ չէ յիշեալ օրէնքում,—որ ուսումնարանական վարչութեան պաշտօնատար անձերի կարգադրութիւններն ու բացատրութիւնները՝ վերաբերեալ եկեղեցապատկան կայքերին, համաձայն չը լինելով Բարձրագոյն հրամանի ճիշտ մօտին՝ չեն կարող համարուել կանոնաւոր և օրինական, և որ վերոյիշեալ գիւղերի և հողերի անպայման սեփականութեան իրաւունքով հայ-լուսաւորչական եկեղեցուն պատկանելը ապացուցւում են ներկայացրուած վաւերաթղթերով—այսինքն 1841 թ. ապրիլի 18-ի կալուածագրով և 1842 թ. մարտի 2-ի վաւերացման թղթով (данная), — Մելիք-Աղամեանը, համաձայն Բարձրագոյն հրամանի 2-րդ կէտին, ներկայացնելով այս պահանջը 400,000 ռուբլի արժողութեամբ, խնդրում էր՝ 1. ճանաչել Ախալցխայի հայ-լուսաւորչական Սուրբ-Փրկիչ եկեղեցու, յանձին Վրաստանի և Իմերեթի հայ-լուսաւորչական կոնսիստորիայի, սեփականութեան իրաւունքը վերոյիշեալ անշարժ կայքերի վրայ, նրանց պատկանող լեռներով, դետերով, լճերով, տափաստաններով, խոտահարքերով, արօտատեղերով և բոլոր տափերով, այն սահմաններում, որոնք մանրամասն նկարագրուած են կալուածագրերում, և 2) պահանջել կովկասեան չրջանի ուսումնարանական վարչութիւնից յօդուտ կոնսիստորիային դատաստանական և դործը վարելու ծախքերը:

Այս գործը նահանգական դատարանում քննուելիս՝ կովկասեան ուսումնարանական չրջանի պ. հոգաբարձուն՝ պահանջի խնդրի դէմ գրած իր պատասխանով առաջարկում էր տարամերժում (отводъ)՝ գործի քննութիւնը դատաստանական հիմնարկութիւններին ենթակայ չը լինելու պատճառով, ապացուցանելով, որ համաձայն քաղ. դատ. օր. 1293 յօդուածին՝ այս վէճը պէտք է լուծուի վարչական կարգով, ուստի և խնդրում էր, որ այս գործը, իբրեւ անկանոն կերպով յարուցուած նահանգական դատարանում դադարեցնուի քննուելու: Սակայն նահանգական դատարանը և ապա դատաստանական պալատը և Կառավարիչ Սենատը, որի քննութեանը հասաւ այս գործը՝ դատաւենթակայութեան տեսակէտից՝ կովկասեան ուսումնարանական չրջանի հոգաբարձուի վճարելութեան խնդրով, հոգաբարձուի տարամերժումը ճանաչեցին անկանոն, իսկ այս գործը՝ ենթակայ դատաստանական հիմնարկութիւններին, որի մասին և 1901 թ. մարտի 19-ին ուղարկուեց Կառավարիչ Սենատի հրամանագիրը Թիֆլիսի դատաստանական պալատին:

Սրանից յետոյ Թիֆլիսի նահանգական դատարանը գործը քննելով ըստ էութեան՝ կոնսիստորիայի պահանջը գաւալիովին ապացուցուած և իր վճռով բաւականութիւն տուեց կոնսիստորիայի պահանջներին, ճանաչելով նրա սեփականութեան իրաւունքը վերոյիշեալ անշարժ կայքերի վրայ, դատաստանական և գործը վարելու ծախքերը դնելով կովկասեան ուսումնարանական չրջանի հոգաբարձուի վրայ։ Այս վճռի դէմ հոգաբարձուն բողոքարկու գանգատ տուեց դատաստանական պալատին, որի նիստի ժամանակ ուսումնարանական վարչութեան չահերը պաշտպանում էր Պետերբուրգից եկած՝ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան ատանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Ա. Պ. Դայեւ և Թիֆլիսի նահանգի ժողովրդական ուսումնարանների տեսուչ պետական խորհրդական Պերեվոդնիկով, որոնք ապացուցանելով կոնսիստորիայի պահանջի անկանոնութիւնը՝ պալատից խնդրում էին մերժել պահանջը և ոչնչացնել նահանգական դատարանի վճիռը։ Մինիստրի և ուսումնարանական չրջանի հոգաբարձուի լիազօրների բացատրութեան նայելով՝ այս պահանջը յայտնուած է ատանց որ և է հիմքի, որովհետև ուսումնարանական վարչութիւնը չը հերքելով եկեղեցու սեփականութեան իրաւունքը վիճելի կայքերի վրայ՝ պնդում էր այդ կայքերի միայն եկամուտների իրաւունքի վրայ, որոնցով ապահուում էին այն ուսումնարանների ծախսերը, որոնք անցան ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան տեսչութեան տակ համաձայն պետական խորհրդի 1897 թ. յունիսի 2-ին Բարձրագոյն հաստատուած կարծիքին, և բացի սրանից՝ գործի մէջ ապացուցուած չէ, որ ուսումնարանական վարչութիւնը յիրաւի վիճելի կայքերը սեփականատէրից առել է իր տիրապետութեան տակ։ Կոնսիստորիայի հաւատարմատարը, երգուեալ հաւատարմատար Մելիք-Ա. դամեան, պահանջի խնդրի հիմքերը պարզաբանելով՝ բացատրեց.— որ ներկայ պահանջը յարուցանելու առիթ տուեց կովկասեան ուսումնարանական չրջանի պ. հոգաբարձուի կարգադրութիւնը՝ զրաւել վէճի տակ եղած եկեղեցապատկան կայքերը ուսումնարանական իշխանութեան տեսչութեան տակ, որոնք և ընդունուել էին ընդունման ակտով, որ կազմել է ժողովրդական ուսումնարանների տեսուչ պ. Բողղանովը 1898 թ. Ի օգոստոսին։ Այս ակտը գործին ներկայացնելուց խուսափում է ուսումնարանական վարչութիւնը՝ չը նայելով պահանջի խնդրի յայտնած ցանկութեանը լոկ խօսքով, պնդելով թէ վիճելի կայքերը չեն ընդունուած նրա տեսչութեան տակ։ Իբրեւ ապացոյց, որ վիճելի կալուածները յիրաւի ընդունուած են եղել

կովկասեան ուսումնարանական իշխանութեան տեսչութեան տակ՝ Մելիք-Աղամեանը, բացի յիշատակելուց նոյն-ինքն ընդունման ակտը, որ կաղմուած է 1898 թւի օգոստոսին և որը խնդրեց պահանջել հոգաբարձուից՝ ներկայացրեց գործի համար—1) կովկասեան ուսումնարանական չրջանի պ. հոգաբարձուի հաղորդագրութիւրը 1898 թւի հոկտեմբերի 7-ից № 11621. 2) կոնսիստորիայի հաւատարմագիրը՝ ուսումնարանական չրջանի հետ ծագած գրագրութեան մասին՝ գրաւուած կայքերը վերադարձնելու վերաբերմամբ, և 3) Ախալքալաքի գաւառապետի հաղորդագրութիւնը 1898 թ. սեպտեմբերի 3-ից № 466: Այս դոկումենտներէից ի միջի այլոց երևում է, որ մինչև այս պահանջը ներկայացնելը կոնսիստորիան մի քանի անգամ պահանջներով դիմել է կովկասեան ուսումնարանական չրջանի հոգաբարձուին՝ իրան վերադարձնելու անվիճելի կարգով՝ անկանոն կերպով գրաւուած անշարժ կայքերը, և որ երբ այս ուղղութեամբ բոլոր փորձերը ապարդիւն են անցել, այն ժամանակ միայն կոնսիստորիան հարկադրուած է եղել դիմելու դատարանի օգնութեան և խնդրելու վերականգնել հայոց եկեղեցու խախտուած իրաւունքը, համաձայն Մինխտրների կոմիտետի 1898 թւի մարտի 26-ին Բարձրագոյն հաստատուած որոշման ճիշտ իմաստին: Սրանից անկախ՝ կոնսիստորիայի հաւատարմատարը մասնացոյց եղաւ և այն բանի վրայ, որ գործը նահանգական դատարանում քննելու ժամանակ նոյն-ինքն ուսումնարանական չրջանի լիազօրը չը հերքեց վիճելի կայքերի՝ ուսումնարանական իշխանութեան տեսչութեանը անցնելու իրողութիւնը, այլ միայն ապացուցանում էր, որ այս կայքերն ընդունուած են 1898 թւի մարտի 26-ի որոշման հիման վրայ՝ իբրև սեփականութիւններ կարապետեան և Եղիսարէթեան հայ եկեղեցական ուսումնարանների, որոնց այդ կայքերը, ինչպէս ասում էր լիազօրը, կտակուած էին կարապետ արքեպիսկոպոսից՝ իբրև լիակատար սեփականութիւն: Բայց երբ կարապետ արքեպիսկոպոսի կտակը ներկայացնուելով յայտուեց, որ կայուածաթղթերով եկեղեցու անունով հաստատուած այս վիճելի անշարժ կայքերը արքեպիսկոպոսից կտակուած էին եկեղեցուն իբրև անպայման սեփականութիւն, միայն նրանց եկամուտների մի մասը յատկացնելով եկեղեցական ուսումնարանների պահպանութեան՝ այն ժամանակ ուսումնարանական չրջանի լիազօրը սկսեց արդէն պնդել, թէ ուսումնարանական վարչութիւնը ամենևին չէ էլ առել իր տեսչութեան տակ եկեղեցական կայքերը, այլ միայն պահանջում է այս կայուածների եկամուտների մի մասը կարապետեան և Եղիսարէթեան ուսումնարանների օգտին: Վերոյիշեալից ե-

րեում է, որ պատասխանատու կողմը մերժում էր հայոց եկեղեցու սեփականութեան իրաւունքը այն անշարժ կայքերի մասին, որոնք 1898 թվի օգոստոսին կազմուած ընդունման ակտով անցել էին ուսումնարանական իշխանութեան տեսչութեան տակ, և որ այս վէճն արդէն գոյութիւն ունենալով, նահանգական դատարանը պարտաւոր էր վճռել այս հարցը, արդեօք վիճելի կայքերը պատկանում են յիշեալ ուսումնարաններին իբրև իրաւաբանական անձերի, թէ կազմում են սեփականութիւն հայոց եկեղեցու: Եւ այս հարցը նահանգական դատարանը վրձնել է բոլորովին կանոնաւոր կերպով, գործին ներկայացրուած կալուածագրերի հիման վրայ, հայոց եկեղեցու օգտին: Այս պատճառով պ. Մելիք-Աղամեան խնդրում էր դատաստանական պալատից՝ հաստատել նահանգական դատարանի վճիռը, առանց հետևանքի թողնելով կովկասեան ուսումնարանական չրջանի լիազօրի բողոքարկու գանդատը, ուսումնարանական վարչութեան վրայ դնելով դատաստանական և գործը վարելու ծախսերը երկրորդ ինստանցիայում յողուտ կոնսիստորիայի:

Դատաստանական պալատի պրոկուրորի օգնականի պաշտոնակատար Ա. Աղիգեօղալով հայոց կոնսիստորիայի պահանջը գտնելով անկանոն և անհիմն յարուցուած՝ առաջարկում էր նրա այս պահանջը մերժել և նահանգական դատարանի վճիռը բեկանել:

Թիֆլիսի դատաստանական պալատը մի ժամ տևող խորհրդակցութիւնից յետոյ դուրս բերեց հետեւեալ դատավճիռը. նահանգական դատարանի վճիռը հաստատել՝ առանց հետեւանքի թողնելով կովկասեան ուսումնարանական չրջանի հոգաբարձուի լիազօրի բողոքարկու գանդատը, և վերջինից պահանջել յողուտ հայոց կոնսիստորիայի 1280 ռուբլի դատաստանական և գործը վարելու ծախս՝ երկրորդ ինստանցիայի համար:

Հայոց դրամատիկական ընկերութեան ընդհանուր ժողովը.— Կիրակի, մայիս 11-ին, Արախտիկական ընկերութեան դահլիճում կայացաւ դրամատիկական ընկերութեան ընդհանուր ժողովը՝ 55 անդամների ներկայութեամբ: Նախագահ ընտրուեց պ. Շիրվանդադէ: Նախ կարգացուեց նախորդ ընդհանուր ժողովի արձանագրութիւնը, ապա ժողովը պ. Նախագահի առաջարկութեամբ ոտքի կանգնելով՝ յարգեց տիկին Մակարեանի, ընկերութեան անդամ վաղամեռիկ Վ. Նալբանդեանի և մի քանի ուրիշ անդամների յիշատակը:

Կարգացուեց ընկերութեան դրամական համաժողով հաշիւը, որից երեաց, որ ընկերութիւնը 34 ներկայացումներից մուտք ունեցել է ընդամենը 15100 ռ., միջին թւով 440-ական ռուբլի, իսկ ծախս թատրոնի վրայ 20971 ռ., միջին թւով 617 ռ., ուրեմն ներկայացումներից՝ վեաս եղել է 5970 ռուբլի, որպիսի գումարը ծածկուել է մասամբ անդամակցական վճարներից, պ. Գ. Սունդուկեանից ստացուած 1340 ռ. նուէրով, իսկ մօտ 2500 ռ. փոխարինաբար վերցրուած է անձեռմխելի գումարից, որ կազմուել է տ. Մակարեանի 3000 ռ. նուէրից և պ. պ. Ի. Փիթոյեանի և Ա. Մանթաշեանի յանձնած նախկին ակումբի գումարից մօտ 3400 ռ.: Ժողովականներից չատերը գտնուած էին, որ անկանոն է ծախսել անձեռմխելի գումարները, ուստի որոշուեց, որ նմանօրինակ դեպքերում վարչութիւնը նախ պէտք է ստանայ ընդհանուր ժողովի հաւանութիւնը:

Դեֆիցիտը ծածկելու մասին վարչութիւնը յայտնեց, որ կարող էր մասնաւոր նուէրներով ծածկել, բայց որովհետև որոշել են թատրոնական ֆոնդ հիմնել, և որի համար արդէն նախահական քայլեր արուած են,—ուստի լաւ են համարել դիմել նուէրներ հաւաքելու ուղղակի ֆոնդի համար և մեծ յոյս ունեն հաւաքելու մինչև 100,000 ռուբլի: Ընդհանուր ժողովը խնդրեց և յանձնարարեց վարչութեան իրագործել այդ ծրագիրը: Ժողովականներից մի քանիսը առաջարկեցին առանձին ուշք դարձնել անդամներ աւելացնելու վրայ, և իբրև միջոց առաջարկուեց սահմանել թատրոնի տոմսակներից գիշումն անդամների համար և միևնույն ժամանակ չը սպասել, որ ինքնաբերաբար գրուեն անդամ, այլ ուղղակի դիմումներ անել. բացի այս՝ առաջարկուեց արոնեմենտները աւելացնել և ցրել մեծատունների մէջ:

Վարչութիւնը յայտնեց, որ արդէն եկող 1903/4 թ. սեզոնի համար վարձուած է պ. Կրասովից Արտիստիկական ընկերութեան թատրոնը 285-ական ռուբլով, իսկ դերասաններից չատերը արդէն պայմանաւորուել են. անցեալ տարուայ խմբի վրայ աւելանում են տ. Սիրանոյշ, օր. Խիթարեան, տ. Աւետեան, պ. պ. Աւետեան, Ալիխանեան, իսկ պակասում է պ. Մամիկոնեան. վերջինիս մասին նկատուեց, որ պարոնը անցեալ սեզոնին նկատելի առաջագիւծութիւն է արել, և անյարմար է այդ չըջանում կանգնեցնել գործելուց:

Երկար վիճարանութեան առարկայ դարձաւ այն հարցը, թէ երբ հաշուել հաշուաւութեան տարի—յունուարից—յունուար, թէ սեզոնից —սեզոն, այսինքն սեպտեմբեր, իսկ որովհետև թատրոնը և դերասաններին հարկաւոր է վարձել սեզոնի վերջը, այսինքն մարտին, ուստի որոշուեց, որ նախորդ տարիների համար

նախահաշիւը կազմուի և ընդհանուր ժողովին առաջարկուի սե-
զմը վեջանալուց 10 օր առաջ, ներկայացնելով միաժամանակ
համառօտ հաշիւ նախորդ տարուայ գործունէութեան մասին:

Բեպերաւարական մասնաժողովի գոյութիւնը ժողովը գտաւ
աւելորդ և յանձնեց վարչութեան կազմել բեպերաւար, իսկ եթէ
հարկաւոր լինի պիէսներէ լեզուն կոկել, վճարով հրաւիրել
կարող անձանց այդ գործը կատարելու:

Ընտրուեցին նոր գրեւած անդամները, և յանձնարարուեց
վարչութեան ուղարկել պատգամաւորութիւն հանգուցեալ աի-
կին Մակարեանի ժառանգներին ընդհանուր ժողովի կողմից
շնորհակալութիւն յայտնելու 300 ր. նուէրի համար:

(«Մշակ»)

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Правит. Вѣстн.» մարտի 15-ին տպուած է հետեւեալը.
Զլատօուստ քաղաքում (Ուֆայի նահանգ) արքունի երկաթագոր-
ծական և բեյապաշտական գործարանում մայիսի 9-ին բանու-
որները թւով 160 հոգի մերժելով ընդունել նոր վարձատեւոր-
րակները՝ յայտնեցին ամսի 10-ից գործադուլ անելու մասին:
Մարտի 9-ին բանուորները իրանց հանգիստ էին պահում, սա-
կայն ամսի 10-ին 500 հոգուց բաղկացած ամբոխը հաւաքուեց
հրապարակի վրայ՝ դժգոհութիւն յայտնելով աշխատանքի նոր
պայմանների դէմ: Ի նկատի ունենալով, որ կարող են անկար-
գութիւններ ծագել, Ուֆայի նահանգապետ ի. պ. խ. Բոգդանո-
վիչը, ուֆիմեան չրջմային դատարանի դատախազը և նահան-
գական ժանդարմային վարչութեան մեծաւոր գնդապետ Շատով
մեկնեցին Ուֆայից Զլատօուստ: Մարտի 13-ին բանուորների
ամբոխը պահանջում էր երեք կալանաւորութեանների ազատու-
թիւնը, պաշարել էր դատիկանական վարչատունը, բոտմիստը
Վոլգովի բնակարանը և լեռնային մեծաւորի տունը, ջարդելով
նրա ապակիները և դռները: Բազմաժամ յորդորներից յետոյ,
երբ ամբոխը զօռով չը թողէր դատախազին գնալ բանտը և
ուժով դուրս էր տալիս նահանգապետի յետնից՝ չը նայելով
նրա յորդորին՝ լեռնային մեծաւորի տան վրայ, — նահանգապետը
սովալուած էր առաջարկել վաշտապետին գործել զէնքով: Տան
վրայ դուրս գործող և տարձանակներ արձակող ամբոխը հրա-
ցանաձգութիւնից յետոյ ցրուեց. տեղն ու աւելը մնացին 28
սպանուածներ, վիրաւորուածների թիւը 50 հոգուց աւելի է:
Մարտի 14-ին գործադուլը դադարեց, և բոլոր բանուորները
սկսեցին աշխատանքը: